



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՀԱՅ

744



M124

~~389~~

934

~~387~~

2009

Лиц  
744

№ 338

чур


2324 JAN 2008



# ԱՐՆՈՅ ԳԵՂԹԵ

(1829—1830)

(առաջին համար շեմանիկ)



56

ԹԻՖԼԻՏ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՌԱՄԲԵՐԴՅԱՆԻ Տպարան

ՕՐԵՎԵԼԵՑ ՓՈՎԱՅ, № 1, 2.


1891

ԿԱՐՆՈՅ ԳԱՂԹԸ

Գաղթականութեան խնդիրը վերջին  
ժամանակներում այնպէս զբաղեցնում է մեր  
բանասէրներին, որ ես աւելորդ չեմ հա-  
մարում հրատարակել մի ամփոփ նկարա-  
գիր 1829—30 թուերին Կարինից և նորա  
շրջակայքից Թուսաց Հայաստանի Տայոց  
աշխարհը չուող հայ գաղթականութեան  
մանրամասն տնցքերի, քաղելով ինձ մօտ  
գտնուած գրչագիր լիշտակարաններից և  
պատմական անցքերից:

Այն ինչ ռուսաց գօրքերի քաջութիւնը  
լաղթող էր հանդիսանում Սոմանեանց վե-  
րալ, և արևելքից ու արեմտքից՝ Ելլադայի  
կողմերից գօրանում էր պատերազմի ձայնը  
և սարսափեցնում հազարացւոց ամբողջ տէ-  
րութիւնը և ռուսաց դրօշները Պարսը,  
Ախալցխան և Բայազիդը տիրելուց յետոյ՝  
Պատմեւիչի առաջնորդութեամբ երևեցան

Дозволено цензурою. 25 Мая, 1891 г. Тифлисъ



744-2009

9-

Տիլ. И. Мартирос Оրб. ս. 1/2



հ.թ. 741.



Կարին քաղաքի պարսպի աշտարակների գլխներին, այս անուանի երկրների հայ բնակիչները համարում էին իրանց փոխադրուած հայրենի իշխանութեան նախնի վիճակի մէջ. բայց ժամանակի բերմունքն արգելք եղաւ նոցա սրտերի կատարեալ ուրախութեան, երբ հանդէս եկաւ այդ երկու տէրութեան մէջ հաշտութեան և պայմանագրութեան հրամանը. որովհետեւ այդ նորանուան զաւառները, բացի Ախալցիա քաղաքից, թողնուում էր օսմանցոց տիրապետութեան. հայերին մխիթարեց դաշնադրութեան մի կէտ, որով այդ զաւառների բոլոր բնակիչներին ազատութիւն էր շնորհւում, ով կամենար կը մնար, ով չէ՝ կարող էր զաղթել չայտատանի այլ կողմերը ուստաց իշխանութեան ներքոյ:

Այնուհետև ամեն կողմերի հայերի զըլխաւորները մտածեցին, որ թէ հայերը և թէ նոցանից հետեալ հայ-կաթողիկներն անկարող էին այլ ևս Պոմանեան տէրու-

թեան ծանր լծի տակ մնալ, ուստի յօժար կամքով յանձնառու եղան թողնել իրանց հայրենի բնակութեան տեղերը և անցնել քրիստոնեայ իշխանութեան հովանաւորութեան տակ, բարեւք համարելով ժամանակաւոր վիշտն ու նեղութիւնը միանդամ տանել և ապա աներկիւդ ապահովութիւն ու հանգիստ վայելել: Ուստի Կարին քաղաքի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը ինզիր տուեց զլխաւոր սպարապետին հրաման տալու, որպէսզի ժողովուրդը դադթէ ուսւաց կայսերութեան սահմանները. նոյնափիսի խնդիր տուին նաև կաթոլիկ հայերը իրանց վարդապետի ձեռքով: Կարնեցիների թիւը 3000. տուն էր, իսկ կաթոլիկներինը 300, բացի գիւղացիներից: Չորս օրից յետոյ սպարապետը իրաւունք տուեց, որ ցանկացողները կարող են դադթել և պատուիրեց միանդաման, որ ամենքը միասին չշտապեն, որպէսզի ցրտից առանց օթեանի չնեղանան, այլ քիչ քիչ դադթեն,

քանի որ ռուսաց զօրքը դեռ ուժն ամի՞  
մնալու է այստեղ:

Կամաւոր չարչարանքի յանձնաւ՝  
նը ծանր վշտերի նախատեսութիւնները  
կատկածելի էր, թեթևացրեց  
ամեն նեղութիւնները, որոնք յօժանին  
թեամբ իւրեանց կահկարասին չնչին գնով  
ծախեցին, հարուստները ճանապարհ ընջն  
նելու, իսկ աղքատները փոքր ինչ առձեռն  
փող ունենալու համար: Եւ այսպէս 1829  
թուի հոկտեմբերի 14-ին թողին իրանց  
հայրենիքն և սկսան քաղաքից հեռանալ—  
կաթոլիկներից աւելի հարուստ ու անուա-  
նիքը, իսկ հայերից մի քանի խեղճեր: Եւ շատ  
յաջող եղաւ առաջին անգամ զաղթող յի-  
սունաշափ տների կարաւանի բաղդը, որով-  
հետև ճանապարհին նոցա պատահեց սպա-  
րապետը, որ Թիֆլիս էր վերագառնում, և  
մի դունդ զօրք դրեց նոցա հետ պահպա-  
նութեան համար, որ մինչև Ղարս հաս-  
ցնեն: Կաթոլիկները Ղարսից Լուի անցան՝

Ջահնազար, Մօլլասուլէյման, Ղարաքիլի-  
նէ և Սարչապետ դիւղերը ձմեռն այստեղ  
եւ կրօնակիցների հետ անցկացնելու.  
Այս հայերին ախորժելի թուեցաւ Ղարս  
կը պարագանչունչւ տեսնեն թէ վերջը ինչ է  
այս: Եյս դադթողներից իւրաքանչիւր  
տառաւէտէր իւր ընտանիքն ուղարկելով՝  
ուանք Արզում մնացին, մինչև իրանց  
ոււետուրը (շահավաճառ) կվերջացնէին,  
որի մասին մեծ գործ կատարեց սոտիկա-  
նութիւնը, որ այդ ութն ամսուայ ըն-  
թացքում կարելոցն չափ թեթևացրեց  
քրիտոննաներին պարտքերի, և պահանջ-  
ներից, որպէսզի անարդել կարողանան  
ռուսաց սահմանն անցնէլ:

Յիշեալ խմբի դնալուց յիտ՝ ձմեռուայ  
խոսութիւնը հասնելուն աէս զագարեցին  
ճանապարհորդութիւնները, և ամենայն  
մարդ սկսաւ հանդարտ մտածել տեղափո-  
խութեան տեղերի ու հանգամանքների  
մասին, գրեթէ բոլոր ժողովուրդը, քաղա-

քաղիք և գիւղացիք իրանց անունները  
արձանագրել տուին Բանզրատև զօրավա-  
րին և նա հայերին ու կաթոլիկներին ցոյց  
տուեց զլսաւոր սպարապետի ուղարկած թղ-  
թի պատճէնը, որի մէջ նշանակուած էր այն  
տեղերի անունները, ուր կարելի էր ժողո-  
վրդին փոխադրել. և առաջարկեց ազատ  
կերպով ընտրել որն էլ կամենան։ Կարա-  
պետ արքեպիսկոպոսը իւր 38 պատուա-  
ւոր ազգայիններով ստորագրութեամբ  
խնդրեց Ախալցխան, նոյնպէս կաթոլիկ-  
ներն էլ բազմիցու խորհուրդ անելով ընտ-  
րեցին իրանց Համազգիններից քաժանուիլ,  
և յօժարեցան Ախալցխա տեղափոխուել,  
որպէս զի փոքրաթիւ լինելով օտարու-  
թեան մէջ չդժուարանան ապրել, մանա-  
ւանդ որ կրօնի խտրութիւնը ամենևին չէ  
վնասում «քաղաքական բարեզարդու-  
թեանց». և նոյա վարդապետները այս  
բանը յայտնեցին Բանզրատև գեներալին։  
Այդ ժամանակ Բանզրատևը մարդ ուղարկեց

Ախալցխայի հրամանատար Տրեշեր փոխ  
գնդապետի մօտ, հարցնելու թէ քաղա-  
քում որքան տեղ կայ բնակութեան հա-  
մար. որովհետև քաղաքը երեք անգամ  
աւերւած էր, առաջինը՝ երբ ուստաները  
սաստիկ պատերազմով քաղաքն առան,  
երկրորդ՝ Աջարացու կողոպտելու ժամա-  
նակ, երբ քաղաքը հիմնայատակ եղաւ, և  
երրարդ՝ ժանտախտի ժամանակ, երբ ուու-  
սը այն ամեն տները, ուր որ հիւանդու-  
թիւնը բուն էր դրել, կարասիքով հրոյ-  
ճարակ տուեց, որպէս զի ցաւի արմատը  
չնջէ։ Նոյնպէս կարապետ արքեպիսկոպո-  
սըն էլ երեք մարդ ուղարկեց զննելու քա-  
ղաքի և շրջակայ գտւառների գիւղերը։  
Ուղարկած գեսպանները յետ դարձան, և  
բարի համբաւ բերին տեղի մասին, տեղի  
դրութեան նկարներով, որը տեսան Բանզ-  
րատևի մօտ և շատ զովասանքներ լսե-  
ցին ցանկացած տեղի մասին. շուտով Բանզ-  
րատևը հրատարակեց հայոց ազգի ամեն մի

գասակարդի մէջ, որ գարնան բացուելուն  
պէս պատրաստ լինին ճանապարհ ընկնելու:

Մինչդեռ կարնեցիք պատրաստութիւն  
տեսնելու ետևիցն էին, անհոգ չեին նա-  
և կարսցիք ու բայազիցիք, որովհետեւ  
կարսցիք իրանց խնդրի համեմատ ստա-  
ցան Փամբակն ու Յօրագեալը, և բայա-  
զիցիք Գեղարքունուոյ կողմերը իւր շըր-  
ջականներովը, ինչքան որ բաւական կըլի-  
նէր նոցա իրանց խաշներով. և քսան  
հաղար ոսկի արքունիքից փոխ առան  
առանց տոկոսիքի հինգ տարուալ ընթաց-  
քում հատուցանելու պայմանով: Խոլ յոյ-  
ները, որոնք չայստանի զանազան գա-  
ւառներում ցրուած էին վեց հարիւր տան  
չափ՝ ծալկան ստացան: Որովհետեւ զիւ-  
միւշանցի եօթանասուն տուն յոյներ  
Պատկերչի արշաւանքների ժամանակ ե-  
կան անցան Վրաստան և նոցա զիխաւո-  
րին, որի անունն էր Թօփօրի, յանձնուե-  
ցաւ ընակութեան տեղ պատրաստել ամ-

բողջ յոյն գաղթականութեան համար ուր  
և կամենայ Վրաստանի մէջ. և Արգրումի  
մէջ մի զգօն վաճառական Եանի անունով  
և նոցա աւագերէցը դործի նախաձեռնու-  
թիւնը յանձն առան. խակ բոլոր նոցա ժո-  
ղովուրդը յօժարութեամբ ընդունում էին,  
ինչ որ նոքա որոշում էին ու հրամայում:

Կաթոլիկ ժողովրդի մէջ մի փոքր  
տարածայնութիւն ծագեցաւ ոչ թէ մնա-  
լու կամ դնալու խնդրի համար, վասնզի  
արդէն վաղուց նոցա յօժարութիւնը յայտ-  
նի էր, և այդ թողուած էր ամենքի  
ազատ կամքին, այլ տեղի ընտրութեան  
համար: Որովհետեւ երբ Արգրումի բազմու-  
թիւնը Սխալցխան ընտրեց որպէս յնակու-  
թեան յարմարացոյն տեղի, նոքա, որոնք  
նոցանց վաղօրօք գաղթել էին և դեռ Լո-  
ռի էին, պնդում էին, որ այնտեղիսկ հիմ-  
նեն իրանց բնակութիւնը: Եւ երկար նա-  
մակագրութիւններից յետոյ երկու կողմից  
էլ, վերջը նոքա սկսան զննել զանազան

երկիրները՝ Լոռին, Ջօրագեալը և Փամբակը. ընտրեցին Փամբակի Ղարաքիլիսէ տւանը Կարսեցիների հետ այնտեղ ընակուելու և զնալով Թիֆլիզ՝ բոլոր Կարսեցի կաթոլիկների անունով խնդիր տուին կառավարութեան Ղարաքիլիսէն իրանց տալու և պատասխան ստացան, թէ կարնեցիներին արտել է Ախալցխան, իսկ դուք եթէ կամենում էք կարսղ էք Փամբակ գնալ: Այն ժամանակ զրեցին նոքա իրանց վարդապետին և ժողովրդին, որ իրանց հետ Փամբակ զնան. իսկ նոքա պատասխանեցին, թէ տէրութեան տուած խոստումից յետ անկարելի է իրերի փափոխութիւնը: Երբ նոյցա որսալու յոյսը կտրեցին կէսը նոցանից Ախալցխան ընտրեց և միւս կէսը մնաց տեղն ու տեղը տատանման մէջ:

Այսուամենախիւ, որովհետև դժուար էր հարենի տունը և բնակութիւնը թողնել, մանաւանդ աղքտուների համար, և

շատերը ցանկութիւն ունէին, որ ոռւսները չթաղնէին օսմանցւոց գտւառները, և առհասարակ ռամիկները, որ անձանօթէին քաղաքականութեան օրէնքներին՝ չեին հաւատում հաշտութեան և յետ դառնալու խօսքերին, և սնուտի խօսքերին հաւատ ընծայելով պնդում էին թէ պատերազմը պէտք է նորողուի ու ոռւսը Արզումից չպէտք է հեռանայ, որի համար մեծ աշխատութիւն պէտք եղաւ ամենքի խորհուրդը հաշտեցնելու և միենոյն կէտի կանդնեցնելու ամենքին. միայն թէ ամեն մէկի կամքին թողնուեցաւ գնալը կամ մնալը, երկու դրութիւնն էլ պատկերացնելով նոցա առաջ, այն է թէ՝ օսմանցւոց իշխանութեան տակ մնալու համար՝ լիշեցէք այսքան դարեր կրած տառապանըները, իսկ զնացողները թողնի նկատի ունենան և յանձն առնեն ըսկզբում բազմադիմի նեզութիւններ, իսկ ապա մշտամւ անդորր խաղաղութիւն:

Այս բոլոր նախընթաց պատրաստութիւններից յետոյ 1830 թուի մայիսի կէսին մեծ աշխատութեամբ սկսուեցաւ ժողովրդեան գաղթականութիւնը. վասն զի այդ տարին սովորութեան հակառակ անձրւեն ու ձիւնը ուշացաւ, այնպէս որ դաշտում կերակուր չէր ճարւում անասունների համար. և ձիւնից ու անձրւեց գոյացած ցեխը դեռ բոլոր ճանապարհները բռնած ունէր: Սակայն գաղթող ժողովրդի բաղմութեան նայելով բաղմաթիւ սալերի կարեւորութիւն կար նոցա առաջ շարժելու համար. և տէրութիւնը իրաւունք չունէր շրջակայ գիւղերի քրիստոնեաններին ստիպել այդ պակասը լրացնելու, մանաւանդ որ նոքա էլ ճանապարհ ընկինելու համար էին պատրաստուած, թէպէտ ցանկացողներին արդելող չկար օգնելու, որոնք բաւական նպաստեցին գաղթականների տեղափոխութեան: Այդ պատճառով Բանղրատեւ պատուէր ուղարկեց Կարս,

որ ամբողջ գաւառում ինչքան հայերի թէթուրքերի սալեր կան՝ բոլորն Արզրում քշեն, որոնց բեռնակրութեան համար Կարապետ արքեպիսկոպոսը սակարկեց զանթարին 80 դւուշ, և երեք մարդ մի զանթար, թէպէտ յետոյ զինը պակասեց: Տէրութիւնը ևս իւր կողմից նպաստ բաժանեց աղքատներին, իւրաքանչիւր տանը քսանուհինդ մանէթ թէ քաղաքացիներին և թէ զիւղացիներին, որից երբորդ մասը տուած ճանապարհորդութեան սկզբին, և մնացեալը խոստացաւ տալ վերջը. նմանապէս ճանապարհին իւրաքանչիւր բանակատեղը հասնելուն պէս ալիւր և ցորեն բաշխուեցաւ. սակայն կաթոլիկնեզր փող ժողովեցին իրանց մէջ և բաժանեցին այն աղքատներին, որոնք մնացել էին տէրութեան տուած ցուցակից դուրս: Ճանապարհին մի սխալմունք տեղի ունեցաւ, որ ամիսներով երկարացրեց այդ ճանապարհորդութիւնը. կարծելով, թէ պատ-

բաստ սալերը բաւական չէին բոլոր ժա-  
ղովրդին տանելու, հրամայուեցաւ, որ վար-  
ձաւոր սալերը ժողովրդին տանին մինչև  
Կարս, թողնեն այնտեղ ու իրանք յետ  
դառնան մնացեալներին տանելու: Սալերը  
հասան Կարս, և որովհետև ժողովուրդը  
չէր սպասում սալերի զալուն՝ սալերը  
ցրում էին իւրաքանչլւրն այս ու այն  
կողմ և ժողովուրդը ստիպուած էր մնալ  
գետնին. որա հետևանքն այն եղաւ, որ  
ժողովուրդը ծանր աղքատութեան ենթար-  
կուեցաւ: Այ այս ամեն պատրաստութիւն-  
ները կարգի գցելու համար մինչև որ քա-  
ղաքը բոլորովին կդատարկուէր, հայոց արք-  
եպիսկոպոսը և կաթոլիկների վարդապե-  
տը ստիպուած էին Բանգրատելի հետ զրեթէ  
ամեն ժամ տեսնուիլ և կարեսոր տնօրինել:

Այս ամենին հետ լուսաւորչական և կաթողիկ հայերը համաձայնութեամբ յարմար համարեցին ժողովրդի կողմից մի քանի զործակալներ ուզարկել Ախալցիս, որ

գնացողների համար բնակութեան տեղ  
պատրաստեն քաղաքում և զիւղերում. և  
ուղարկուեցան հայերից՝ Եազճի օղի Պօղոս  
և մահտեսի Կարապետը, իսկ կաթողիկե-  
ներից՝ Լալօղու Յօհանջանը և նորա քեռ-  
որդի Էղիղիկեան Գրիգորը, գորավարի վա-  
ւերական թղթով այնտեղի հրամանատա-  
րի անուանը և մի ընծալական թղթով  
կաթոլիկների կողմից քաղաքի ժագովրդի  
անունով. երբ նոցա ճանապարհ դրին՝ ժո-  
ղովուրդն էլ սկսաւ ճանապարհ ընկնել:

Մայիսի 15-ին ժողովուրդը սկսաւ հե-  
ռանալ էր սեպհականությանից՝ և  
մինչև յունիսի հինգը դատարկուեցաւ ամբողջ  
Կարինը, Կարնոյ շրջակայ դաշտը, Գեր-  
ձանը, Թորթումը, վերին և ներքին Բա-  
սենը, Գէքմանը և Խնուրը, և խմբվին  
ազատագէմ և համարձակ դնում էին իրանց  
ճանապարհը: Եւ ամեն օր ժողովրդի ճա-  
նապարհ ընկնելիս՝ Բանզրատեւը մի մի  
վերակացու էր դնում հետները զինուր-



Ների խմբով, որ տանեն խաղաղ և աներկեսդ հասցնեն մի օրուայ ճանապարհ նշանակած տեղը։ Դորա համար գործը մի փոքր ուշանում էր, որովհետև հարկաւոր էր այլ և այլ տեղերից գաղթողներին հաւաքել, ճանապարհ ընկնող տների հաշիւր պահել և ցուցակը գորավորին հասցնել, որպէս զի նոցա բոլորի համար օրինաւոր կարգադրութիւն անէր և հրամայէր կարեւոր զգուշութիւններ գործ դնել, վասնզի բաւականին երկիւղալի էին աւազակաբարոյ քրգերի բնակութիւնները, որոնք չայաստանի բոլոր լեռնամէջերը գրաւած ունին, և առանց վախենալու բոլոր թաղաւորների սպառնալիքներից անպատճ զործում են ինչ որ ուզում են։ Սկսպիսի արկածների առաջն առնելու համար էին ահա այդ տեսակ զգուշութիւնները։ Նոյն իսկ ինքը բանգրատև գորավորը չէր յանձն— առնում անձամբ գուրս դնալ քաղաքից՝ իրաքանչիւր օրուայ չու-

ողներին տեսնելու համար. այլ ինքը միայն սիրտ էր տալիս նոցա արի լինել մի փոքր ճանապարհի նեղութեանց դիմանալու՝ ապագայ հանգստեան յուսով։ Այսքանն էլ մեծ քաջակերութիւն էր մի այնպիսի ժողովրդի համար, որ յուսոյ և կասկածի մէջ շփոթուած տատանուում էր։ Երբ ամբոխն առաջին օրը ճանապարհը ընկաւ, զօրավարը յորդորեց Կարապետ արքեպիսկոպոսին, որ շուտով քաղաքից հեռանայ ինքն էլ, որպէս զի ժողովուրդը ըլ դանդաղի այլ և այլ սնոտի յոյսերով ու պատճառաբանութիւններով։ և նա նորախօսքով մի քանի օր չասանդալէի վանքում հանգստանալուց յետոյ յունիսի Յ-ին դնաց դէպի Կարս, և երբ ժողովուրդը հաւաքուեցաւ այնտեղ՝ այնտեղից էլ գուրս գնաց դէպի Ախալցխա։ Արգրում քաղաքում մընացին կաթոլիկներից միայն չորս տուն, որոնք չը յօժարեցան դուրս գալ այնտեղից, և դարձեալ եօթ տուն, որոնք գնալով

Տրապիզոն, ցանկանում էին խրիմ գնալ այն-  
տեղից, բայց տաճիկների տուած լոյսերից ու  
խռատումներից համոզուելով՝ լետ դարձան  
այնտեղից իրանց տեղը. հայերից էլ մնա-  
ցին մօտ հարիւր, որոնց պարագլուխը քեօսէ  
օղու արապկերցի Համբարձումն էր, մէկ  
ժիր և զործունեալ մարդ, որոնց վերջին  
օրը Պօլսից նոր առաջնորդ հասաւ Բար-  
դուղիմէսս վարդապետը, ժաղովրդին լետ  
պահելու գաղթելու գիտաւորութիւնից,  
բայց ոչինչ օգուտ չունեցաւ: Խակ Կարնի  
շրջակալ գիւղերում խիստ քիչ մնացին թէ:  
Հայերից և թէ կաթոլիկներից: Ճինիս գիւ-  
ղում, ուր մօտ հարիւր տուն կալին, այն-  
տեղի քահանան ճանապարհ ընկնելիս եռ  
կեղեցին անդամ կրակ տուեց, որ այլ ևս  
լետ դառնալու լոյսը չունենան. նա այն-  
պէս էր զարդարուել զէնքերով, կարծես  
մի քաջ նահատակ էր պատերազմի հա-  
մար՝ պատրաստուած: Բայց պէտք էր տես-  
նել վերջին օրը, լունիսի օ-ին, թէ լին-

պէս Արզրումից ու գիւղերից ժողովուրդը  
զունդագունդ խռափում էր՝ երբ Բանգրա-  
տելը զինուորական հանդիսով քաղաքը  
յանձնեց Փահլիւր փաշալին, որ համի Հա-  
սան փաշալի կողմից եկած էր քաղաքին  
տիրելու, անցնելով Հասանդալէից: Կտրե-  
լի է ասել, թէ Կարնոյ զոներից մինչև  
Հասանդալէ, որ վեց ժամուայ ճանապարհ  
է ձիով, ամբողջ ճանապարհը բռնուած էր  
զօրքով, գաղթականներով և նոցա կարա-  
սիներով ու անասուններով: Եւ որովհե-  
տեւ զեռ զիւղերում շատերը կալին, որոնք  
ցանկութիւն ունէին գաղթելու, ուստի  
Բանգրատելը թողեց քաղաքի մէջ Քրիս-  
տոֆոլոս Վօյնիկով լոյնին, որ տաճիկ լե-  
զուկին տնեղեակ էր, մասնաւոր հեծելազօրի  
հետ միասին, և նորա հետ էլ մի քաջ  
ժարդուն՝ Մկրտիչ Թօշօենց անունով, որ  
պատուած էր հազարապետութեան ա-  
նուամբ, որպէսզի նոքա մնան մինչև համի  
Հասան փաշալի զալը և ողջունեն նորան

իւր կողմից ու միանգամայն հաւաքեն չուռդ ժողովրդեան մնացած «զկաց մընաց» բաներն ու հասցնեն իւր ետևից:

Այս ժամանակները կարնեցւոց զաղթելու միջոցին՝ Պայազիտի Ռէութ զօրավարը դատարկում է իւր ձեռքի տակ եղած դաւառները՝ Պայազիտը, Ալաշկերտն ու Տիատինը, և յանձնում է օսմանցիներին. և որովհետև նոցա սահմանը ռուսաց երկրին մօտ էր և այնտեղ ժողովուրդը հեշտութեամբ էր փոխադրում, բոլոր աշխատութիւնը, վերը լիշածին պէս, կարնեցիներին մնաց:

Ժողովրդեան այդ ահազին բազմութիւնը տարան Վանանդայ դաշտը կարս քաղաքի դէմուգէմը, ուր անպակաս էր նոցա տէլութեան խնամքը, որ մարդաթուով ալիւր էր բաժանում կարօտեալներին: Գիւղացիներին շուտով տարան նշանակած տեղը, որովհետև նոքա սալեր և անասուններ ունէին, և բացի հացից ուրիշ ոչ մի տեսակ չէին ծանրաբեռնում

պետութիւնը: Իսկ քաղաքացիները ոտիպուեցան սպասել այնտեղ քիչ թէ շատ, մինչև որ սալեր կտտնէին և կշարժէին այդքան բազմութիւնը. իսկ սալերի խիստ մեծ կարօտութիւն կար ոչ միայն ամբոխի բազմութեան պատճառով, այլ և զօրքի ծանրոցի, պատերազմական անօթների ու պատերազմից մնացած բազմակուտակ աւարի համար: Որոնք ձեռնհաս էին սալեր վարձեցին և Ախալցխա ուղարկեցին. այսպէս և կարսեցիք էլ դատարկեցին իրանց քաղաքն ու զիւղերը և անցան զօրգեալու գաւառն ու Փամբակ, իսկ մընացած կարնեցիները փոքր առ փոքր արքունի ծախքով անցան Դիւմրի աւանը: Վասնզի զաղթելու զործի ուշանալու պատճառով, և նշանակեալ ժամանակը հասնելուն համար, երբ պէտք է կարսը օսմանցիներին յանձնէին, այլ ևս հնար չկար ժողովրդեան Արտահանով ու Զըլտըրով ուղարկել, որովհետև Արտահանն է՝

Օսմանցու մտուն էր, և Բանգրատեղ պատուիրեց նոցա վոխաղը կը Գիւմրի ոռուսաց սահմանը. որտեղից կամաց կամաց թէպէտ շատ երկար ճանապարհով դնան իւրեանց տեղը. և յուլիոի 5-ին, Արդրումը վերագրձնելուց մի ամիս յետոյ, Կարսն էլ յանձնեցին, թողնելով այնտեղ պայմանին Համաձայն վերոյիշեալ Վօյնիկովին մինչև կարսեցիների ցորենի հունձը: Փողովուրդը երբ հասաւ Գիւմրի, բանակեցաւ Ախուրեան գետի ափի մօտ, որ տաճկերէն կոչւում է Արփաչայ. և մինչև այնտեղ էր Բանգրատեղ՝ կաթոլիկներին, որոնք մինչեւ այդտեղ հասնելը խառն էին Հայերի հետ, բաժանեց նոցանից, առանձին բանակետդ և վերակացու տուեց նոցա, որպէսզի դիւրութեամբ կարողանայ ուղարկել նոցա իւրանց ցանկացած տեղը:

Կարսի բնակիչները, որոնք բացի զիւղացիներից իրանք մօտ վեց Հարլւր տուն էին, միանդամից միասին չփոխուեցան,

այլ երեք մասի բաժանուեցան, մի մասը գնաց Փամբակու Ղարաքիլիսէ աւանում բնակութիւն հաստատեց, կէսը աշխատեց Գիւմրին քաղաք դարձնել և ոմանք իւրանց առաջնորդ Ատեփաննոս արքեպիսկոպոսի հետ ընտրեցին իրանց բնակութեան համար Արագածի կողի մօտ մի զիւղ, որ այժմ կոչւում է Պէփչաղ, ուր գտնում է 1201 թուին կառուցած մեծաշէն եկեղեցին: Միւնոյն կերպով և այն զիւղացիները, որոնք Կարսի նահանգից անցան այս կողմը, տարածուեցան կէսը խումբ խումբ և կէսը ցրուեցան մօտակայ զիւղերը մինչև Ապարան. այսպէս նաև Կարսոյ գլուղերից ոմանք. իսկ ուրիշները տեղաւորուեցան Ախալցիսալի գաւառներում՝ Ազգոր, Խրդգ, Ապաստուման, Ախլքալակ և ուրիշ տեղեր: Ոմանք էլ Հացի առժամանակեայ կարօտութիւնից նեղանալով յետ զարձան իրանց երկիրը՝ օսմանցիներից լաւ ընդունելութիւն գտնելով. սակայն

ընդհանրապէս կարսը այնքան հաւատարիմ չգտնուեցաւ իւր խոստման մէջ, ինչպէս կարինն ու Պայազիտը:

Թառնանք այժմ Ախուրեանի ափերին բանակուած կարնեցիներին, սլանք ուշացան ու մօտ երկու ամիս մնացին, որովհետու սայլեր չէին դժնում ճանապարհ ընկնելու համար, վասնզի քաղելու և հերկելու օրերը մօտեցած լինելով ամեն մարդ իւր դորձովն էր զբաղուած և մշակների պէտքը աւելացած էր. իսկ տէրութիւնը իրաւունք չունէր բռնութեամբ նոցա սայլերը հաւաքել, վասնզի եկաւոր ժողովը գեան վորքը վնասոի համար՝ մեծ վնաս պատճառած պիտի լինէր, եթէ սայլերը ժողովելով՝ հունձը ստոնակոխ անէին, ուստի այդ բոլոր դաւառներին վնաս էր: Վասնորոյ Դիւմը զտնուող հրամանատարները միմիթարական խօսքերով յուսադրում էին նոցա համբերել մի առժամանակ, մինչեւ որ Վրաստանից սայլեր հասնէր, ուր վաղ է

վերջանում հունձը. թէպէտե նոցանից ոչ մի օգուտ չեղաւ, որովհետեւ նոքա հնձից յետ խմբովին իջնում էին Կողբի գաւառը աղ կտրելու: Ուստի ովքեր կարող էին սայլեր վարձեցին ու դնացին, իսկ անկարողները մնացին: Հայերից մօտ հազար վեց հարեւր յիսուն տուն, իսկ կաթոլիներից հարիւր յինուն տուն, ընդամենը մօտ հազար ութն հարիւր տուն կարկատած վրանների տակ տարածուեցան ջրի հոսանքի ընդարձակութեամբ, տօթից արեւակէզ և անձրեից ողողուածք թէպէտ տէրութիւնը չէր զադարում հայ մատակարարել նոցա, աժան էր նմանապէս և ուտելիքը, սակայն գանգատներն ու բողոքները խիստ մեծացան, սոխ ու սխտորի և Եզիստոսի պտուիների լիշտառակը նորոգուեցաւ, պառաւների անէծքներն ու դդչիւնը, որոնց հետևեցան և շատ նախատինքներ ու լուտանք, Մոլսիսի երկայնմտութիւն էր հարկաւոր մարդկեղէն անհամբերութիւնը

անվրդով տանելու և միւնոյն ժամանակ  
նոցա մխիթարելու ու սփոփելու:

Այս օրերում, օղոսառի 2-ին, հասաւ  
արդտեղ դաղթական ժողովրդի նոր վերա-  
կացու մայլօր Անօսվը, որին յանձնուած  
էր խնամք տանել 0ոմանեան սահմաննե-  
րից եկած բոլոր դաղթականներին, մինչև  
հասնեն իրանց տեղերը: Նա շուտ շուտ  
այցելութիւն գնալով բանակին և քննե-  
լով ժողովրդի բոլոր պէտքերը՝ պատուիրեց  
ամենքին, որ աղատ կերպով ամեն մէկը  
իր համար տեղ ընտրէ ռուսաց իշխանու-  
թեսն մէջ ուր և կամենալ: Եթիու հա-  
րիւր տան չափ զրուեցան Փամբակ գնալու  
համար, որոնք քիչ քիչ ոմանք սալերով  
և ոմանք եղներով ու դրաստներով հասան  
իրանց տեղերը, և ոմանք զետեղուեցան  
մօտակայ դիւղերը, որ այնտեղ ձմեռը հան-  
գստանան, մինչև քաղաքը կշինուէր. իսկ  
գարնանը պէտք է ժողովուէին քաղաքում  
մշտական բնակութիւն հաստատելու հա-  
մար:

Պատկեիչ սպարապետը բաւական չը  
համարելով այդ ամենը, որ մանրամասնա-  
բար դիտէր ինքը, ուղարկեց նոր դաղթա-  
կանների կառավարութեան համար ոահ-  
մանած խորհրդականներից մէկին՝ այն է  
Սերովէ արքեպիսկոպոսին, այցելութիւն  
նորեկ ժողովրդին, անձամբ գննելու նոցա  
բոլոր պիտուքները և իրան տեղեկութիւն  
տալու: Սերովէն սկսաւ շրջել բոլոր ժո-  
ղովրդի մէջ, սկսած Փամբակի կողմերից,  
ուր կարսեցիքն էին բնակւում, մինչև  
Գիւմրի, և զննելով ժողովրդի մնացած  
մասն էլ, եկաւ հասաւ Ախալցիա օղոստոսի  
22-ին. երբ այնտեղ հասաւ՝ տեսաւ, որ երկրի  
կառավարութիւնը խառնափնդոր և կըն-  
ճռուտած էր՝ հացի կարօտութեան, տների  
ոակառութեան, և տմենից աւելի հրաժա-  
նատարի և նորեկ ժողովրդի մէջ եղած  
անհամաձայնութեան պատճառով նոր քա-  
ղաքի շինութեան առթիւ: Վասնզի Տրե-  
շեռ հրամանատարը մնացել էր անշարժ և

Պասկեիչի հրամանները չէր կատարում,  
և ին քաղաքը թողնելու և նորի շինու-  
թեան ձեռնարկելու վերաբերութեամբ, ոչ  
ոքին չէր թողնում ոչ տուն շինել հին  
քաղաքում և ոչ կրպակ, որի պատճառով  
ժողովուրդը նեղութեան մէջ հեծում էր.  
և չին իմանում թէ ինչ անեն: Սերովբէ<sup>16</sup>  
արքեպիսկոպոսը իրան տուած իշխանու-  
թեամբ հոգ տարաւ, հացի համար զա-  
նազան տեղեր մարդիկ ուղարկեց և բա-  
ւական ցորեն հաւաքեց ժողովրդի համար,  
իսկ կարօտեալներին արքունի ցորեն բա-  
ժանեց. այսպէս նաև անհրաժեշտ բնակա-  
րանների վերաբերեալ կարեոր բարեկար-  
գութիւններ արեց և մի առ ժամանակ  
խեղմերը շունչ առան: Իսկ քաղաքի շի-  
նութեան մասին շատ մտածելուց և խոր-  
հրդակցելուց յետոյ նկատելով, որ ժողո-  
վուրդը գեռ չէր կարող նոր քաղաքի շի-  
նութեան ձեռնարկել, մինչև որ կանցնէին  
այն ծանր վնասները, որ մինչև այդ ժա-

մանակ տուժեցին, և որովհետեւ սովարա-  
պետի պատուէրը ստիպողական չէր, հրա-  
մայեց կրպակներ կառուցանել, և ահա  
կարձ ժամանակի մէջ հարիւրաւոր կրպակ-  
ներ շինուեցան, և ժողովրդի ձեռագործը  
փոքը առ փոքը սկսեց արդիւնք բերել:  
Այս բոլորի մասին Սերովբէն զրեց Պասկե-  
փիչին և Թիֆլիզ գտնուած կառավարու-  
թեան ատենին:

Ելի՛ պատճառով քաղաքական կառա-  
վարիչ Կռուզենցիին ինքը եկաւ քննելու  
գաղթականութեան դրաթիւնը, հոկտեմ-  
բերի 16-ին եկաւ Ախալցխա քաղաքը,  
տեսաւ, հարց ու փորձ արաւ, քննեց, ա-  
մեն բան իմացաւ և ընդունեց բոլոր ժո-  
ղովրդի թէ եկաւորների և թէ բնիկների  
ինդիրները: Այնուհետև հոկտեմբերի 23-ին  
հանդէս կազմեց նոր քաղաքի հիմնարկու-  
թեան, որոց հետ նաև հայոց, կաթոլիկաց  
և ոռոսաց եկեղեցիների հիմնարկութեանց,  
որ գիպող ժամանակին կառուցուին. և

ընդունեց այնտեղ ժողովրդի հնազանդութեան և հաւատարմութեան երդումը։ Այդ ժամանակ Սերովէ արքեպիսկոպոսը հայերէն լեզուով ատենաբանութիւն արեց, իբրև գոհութիւն առ Աստուած ժողովրդի բարեբախտութեան համար, և քաջակերեց նոցա չվհատուել առժամանակեայ մի փոքր նեղութիւններից։ Նորանից յետու անաբանեց թուրքերէն լեզուով Հ. Եփրեմը, որ կաթոլիկների վարդապետն էր, առաջ բերելով հայոց աղջի երբեմն աղէտներն ու այժմեան մշիթարութիւնը։ Երրորդը քարոզեց լրացիների աւազերէցը գոհաբանութիւն վերառաքելով առ Աստուած։

Այդ օրը խնջուք արեց բոլոր ժողով վուրդը: Այնուհետև Կռուզենցիին սահման դրեց, նոր ժողովուրդը հնից անջատելու համար. և նոցա վերակացու նշանակեց Զիլայովին, որ առաջ էլ ժողովրդի կառավարութեան օգնում էր:



«Ազգային գրադարան



NL0177427

